ԱԶԳԱՅԻՆ

Վերջացան ձեմարանի տարեւոր քննութիւնները. յաջող քննութիւնից յետոյ իրանց ուսման ընթացքը աւարտեցին

1. Աստուածատրեան Խաչատուր Ուշքիլիսեցի
2. Խաչատրեան Մանուկ Առատպատցի
3. Հախնազարեան Մարտիրոս Ագուլեցի
4. Մելիք Շահնազարեան Սողոմոն Շուշեցի
5. Մուրատչեան Նիկողայոս Քիշնեւցի
6. Սուլթան - Շահեան Մելքոն Նոր — Նախիջեւանցի
7. Յովհաննիսեան Տիգրան Երեւանցի
8. Տէր Յովհաննիսեան Տիգրան Տաթեւացի
9. Տէր Վրթանիսեան Քրիստափոր Ադրիանուպոլցի

որոնք մրցանակագիրները ստանալուց յետոյ յիշելով Մայր Աթոռոյս եւ ձեմարանի շնորհը, որ յընթացս ուսումնառութեան վայելել են բարոյապէս եւ նիւթապէս, փոքու իւիք ցանկանալով երախտագէտ գտնուել, կից յայտարարութեանս ստորագրեալները խնդրեցին Սինոդից բարեհաճել ընդունել իրանց միամեայ առանց ակնկալութեան ծառայութիւնը ձեմարանում վերակացութեան եւ Ա. Բ. ու մասամբ Գ. դասարաններում ուսուցչութեան պաշտօններով՝ ըստ յարմարագատութեան ուսուցչական ժողովոյ եւ վարչութեան ձեմարանի. գրելով ըստ այսմ.

Ի լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի

Յուսումնաւարտ որդեգրաց ձեմարանի

Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Ամենախոնարհ խնդիր.

Յետ աւարտելոյ յաջողութեամբ Տեառն զընթացս ուսման մերոյ յԳ. Լսարանի, զամս ինն վայելեալ գոլով ի շնորհս Մայր Աթոռոյ Ազգիս, երախտապարտ հոգմարիմք զմեզ. ուստի եւ իղձ է մեզ՝ ստորագրելոցս զէթ փոքու իւիք ծառայութեամբ մերով երախտագէտ գտանիլ առ բարերար Մայր Աթոռն Ազգիս եւ առ ձեմարանն նորին.

Արդ՝ առ ի յայտնելոյ զշնորհակալիս մեր և առ ի հասանելոյ այսպիսում սրտեռանդն բաղձանաց մերոց, եթէ բարեհաճեսցի Սինոդդ, ամենայն սիրով յանձն առնումք միամեայ ժամանակաւ առանց իւրիք ակնկալութեան զդասատուութիւն յԱ. յԲ. և ըստ մասին յԳ. դասարանս, խոստանալով միանգամայն կատարել զբովանդակ պաշտօն վերակացութեան, քարտուղարութեան և եթէ հարկ լիցի և մատենադարանապետութեան, խնդրելով միայն ապ մեզ միջոց կելոյ և եթ ըստ վայելչութեան չափաւոր և համեստ կենցաղի։

Ակն ունելով տնօրէնութեան Սրբազան Անդամոց Ատենիդ

մնամք ամենախոնարհ որդիք

Աստուածատուր Խաչատրեան
Մանուկ Խաչատրեան
Սողոմոն Մ.—Շահնազարեանց
Մելքոն Սուլթան-Շահնանց
Քրիստափոր Տ. Վրդանիսեան
Նիկողայոս Մուրատչեան
Մարտիրոս Հախնազարեանց

Ի 1885 ամի 10 Յունիսի
Ի Ս. Էջմիածին։

Այս յայտարարութիւնը յանուն Սինոդի ստորագրեալ յարգելի ուսանողք ներկայացրին տեսչի ճեմարանի Գեր. Տէր Գրիգոր Սըրբազան եպիսկոպոսի որ յայտարարութեամբ ի 10-ն ամսոյս թ. 125 ներկայացրեց Սինոդի գրելով ըստ այսմ։

Ի ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴՆ ՍՐԲՈՑ Է.ՋՄԻԱԾՆԻ

Ի պաշտօնակատարէ Տեսչի ճեմարանի
Ամենախոնարհ յայտարարութիւն։

Ուսումնաւարտ որդեգիր ուսանողք Գ. Լսարանի ներկայացուցին ինձ առանձին դրութեամբ զխնդիրս զայս և զպատճէն նորին խնդրելով զիսկականն մատուցանել Սրբազան Ատենիդ իսկ զպատճէնն՝ պահել ի գործս ճեմարանիս։

Որպէս տեսանել ունի Սրբազան Ատեանդ, ուսանողք, որք մատուցանեն զխնդիր կցեալն ընդ սմին, յայտնելով զսրտեռանդն շնորհակալիս վասն շնորհացն Մայր Սուրբ Աթոռոյ յորս վայելեցին զամս ինն ի ճեմարանի՝ ի շարս որդեգրաց, ի հաւաստիս երախտագիտութեան առանց իրիք ակնկալութեան խնդրեն յանձնել ինքեանց միամեայ ժամանակաւ զդասաւանդութիւն Ա. Բ. և ըստ մասին՝ Գ. դասարանաց ընդ պաշտաման վերակացութեան, քարտուղարութեան և մատենադարանապետութեան ըստ յարմարագատութեան և որոշման Վարչութեան ճեմարանի և Ուսուցչական Ժողովոյ նորին։

Այս արտայայտութիւն զգացմանց նոցին կրկնակի ունի արդիւնս, նիւթապէս՝ զի հետևող լեալ նոցին, որք յետ նոցա աւարտելոց են հետզհետէ,

որպէս զսովորութիւն և զպարտ անհրաժեշտ՝ ծառայելոց են ի Ճեմարանի Մայր Աթոռոյս որով խնայողութիւն լինի յօգուտ դանձարանի առ տարին աւելի քան զ4000 ռուբլիս, բարոյապէս՝ զի պարտաճանաչութիւնս այս զօրացեալ՝ յուսալ տայ ի ժամանակին կազմել զցանկալին միաբանութիւն ուսումնական ի Մայր Աթոռս ի բարոյական շինութիւն եկեղեցւոյ մերոյ սրբոյ։

Քաջայայտ է Սրբազան Ատենիդ թէ առաջարկութիւն այսպիսի՝ որ ըզկրկնակի ունի շահս նիւթական և բարոյական՝ պէտս ունի քաջալերութեան։

Զյիշատակեալն խնդիր ուսումնաւարտ ուսանողաց Գ. Լսարանի ընդ սմին մատուցանելով Սրբազան Ատենիդ խոնարհաբար խնդրեմ՝ զբարերար տնօրէնութիւն դորին կարելին փութով՝ առ ի աներկմիտս առնել զխնդրատուս ի բարի ցանկութեան իւրեանց։

Ցարգելի ուսումնաւարտները ի նկատի ունելով որ թերևս ուշանայ իրանց տրուելիք պատասխանին՝ ի հաւաստիս երախտագիտական զգացմանց ի 23-ն ամսոյս կիւրակէ օրը՝ յետ Սրբոյ Պատարագին հաճութեամբ Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հօր և Սրբազան Անդամոց Սինոդի հանդուրեան պաշտօն կատարել տուին Հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Կաթուղիկոսի գերեզմանի վերայ ի ներկայութեան միաբանութեանս, աշակերտաց Ճեմարանի և բազմախուռն ժողովրդեան։ Հանգստեան պաշտաման ժամանակ ի դիմաց ուսումնաւարտների Մանուկ Խաչատրեանը կարդաց մի պատշաճաւոր ճառ, զեղուն զգացմամբ։ Այս՝ թէև տիւր՝ բայց մխիթարական հանդէսը փակեց Ամեն. Տեղակալ Սրբազան Հայրը՝ «Հոգւոյ» մաղթանքով։ իսկ ուսումնաւարքը ի ծունկ խոնարհելով հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Վեհ. Կաթուղիկոսի գերեզմանը համբուրելուց յետոյ՝ համբուրեցին և Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հօր աջը՝ որ օրհնելով՝ յաջողութիւն բարեմաղթեց։ Նոյն յաջողութիւնը և խմբագրութիւնս է բարեմաղթում՝ աղօթելով որ անսասան մնան և յարատևեն իրանց ազնիւ զգացման մէջ ի պայծառութիւն ազգի և եկեղեցւոյ՝ որոյ շնորհիւ վերածնուած՝ դառնում են դէպ ի ազգը իրանց առաքելութեան սուրբ նպատակը ի կատար ածելու։

Տեսնելով Ճեմարանի բարգաւաճումն, և այն համակրութիւնը որ ազգը տածումէ դէպի այդ սուրբ հաստատութիւնը՝ ուր պատսպարվում են թող թոշակաւոր գիշերօթիկներն ու երթևեկներն մօտ 170 գիշերօթիկ որդեգիր մանուկներ ընդհանրապէս կիւղացի չքաւոր ընտանիքներից՝ Մայր Աթոռս իրան բարոյապէս պարծատրուած է գտնում։ Մանաւանդ տեսնելով որ կան մար-

դիկ և հաստատութիւններ, որոնք օգնութեան աջ կարկառելով՝ ցանկութիւն են յայտնում ուսումնաւարտներից յաջողակագոյններին բարձրագոյն ուսումնարաններ ուղարկել որոշ պայմաններով կատարելագործուելու և ձեմարանիս մէջ ի ժամանակին՝ պաշտօն վարելու։ Այսպիսի բարեսէր անձանց շարքում առաջին տեղ է բռնում Մեծ. Պ. Աղէքսանդր Մելիք—Հայկազեան, որ մի թոշակաւոր ունենալով հանդերձ հեռագրով յայտնել է Սրբազան Տեսչին թէ ցանկանում է երկամեայ ժամանակաւ տարեկան 800 ռուբլիով մի երիտասարդի ևս ուղարկել Եւրոպա կատարելագործուելու՝ եկեղեցուն ցմահ ծառայելու պայմանով։

Աղօթումենք Աստուծոյ, որ մեր ազգի մէջ Մելիք—Հայկազեաններ շատ յարուցանէ։

Աստուած յարուցանում է մեր ազգի բարոյական շինութեան համար որդիք Աբրահամու, որոնք մին միւսին օրինակ և հետևող լինելով իրանց բարեգործութեամբ ընդհանուր յարգանաց և յաւերժական յիշատակաց արժանի գործ են թողնում և ահա ի հաւաստիս՝ հանգուցեալ Թադէոս Աւագ քահանայ Բուդաղեանի կտակի պատճէնն, որ ստացաւ խմբագրութիւնս Սինոդից՝ ի հրատարակել։

Պատճէն կտակի հանգուցեալ Թադէոս աւագ քահանայի Բուդաղեանց ի Բագու։

«Յանուն Ամենասուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Որովհետև ըստ նախասահմանական վճռոյն Աստուծոյ հարկ է ամենայն մարդոյ մեռանիլ, վասն որոյ ես, ներքոյ ստորագրեալ Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանցս յիշելով զբան Առաքելոյն Քրիստոսի թէ «կտակ յետ մահուն հաստատուն է» մինչդեռ եմ ի կատարեալ բանականութեան և յառողջ դատողութեան իմոյ, աւանդեմ զայս կտակ իմ հարազատ և անբաժան եղբարց իմոց՝ Մովսիսի, Եղիայի և Ենովքայ և որդւոցս՝ Սմբատայ և Երուանդայ Բուդաղեանց յետագայ կարգաւ։

Նախ, պատուիրեմ վերոյիշեալ հարազատ կրտսեր եղբարց իմոյ և հարազատ երկուց որդւոցս՝ որք անբաժան են ընդ եղբարցս, միշտ պատուել զամուսինն իմ ըստ ամենայնի լրիւ զհարազատ և զսիրելի ծնող՝ և եթէ կայցեն և ընակեսցին ամենեքեան ի մի-